ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հունվարի 2024 թվականի N 07 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 217-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերություններ մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 5-րդ կետով և 19-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023թ. հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1080-Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի 2024 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի հունիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 217-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչել:
3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 5-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. հունվարի 4
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290